ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 9-ի ՍԴԱՈ-1-Ն որոշմամբ հաստատված Սահմանադրական դատարանի աշխատակարգը 31-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31.1-ին կետով.

«31.1. Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով առանձին դեպքերում՝ սույն աշխատակարգի 31-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործերը քննության ընդունելու հարցով Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստը Սահմանադրական դատարանի նախագահի կողմից հրավիրվում է Սահմանադրական դատարանի դատավորի հաղորդումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետներում»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

24 հուլիսի 2019 թվականի
ՍԴԱՈ-84